ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒ

ՍԵՐԺ ԱԶԱՏԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Ծնվել է 1954 թվականի հունիսի 30-ին, Ստեփանակերտ քաղաքում: Միջնակարգ կրթությունը ստացել է ծննդավայրում:

1971 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարան: 1972-1974 թվականներին ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերում: 1979 թվականին ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը:

Աշխատանքային գործունեությունը սկսել է 1975 թվականին՝ Երևանի էլեկտրատեխնիկական գործարանում աշխատելով որպես խառատ մինչև 1979 թվականը:

1979-1988 թվականներին եղել է ԼԿԵՄ Ստեփանակերտի քաղկոմի բաժնի վարիչ, ապա՝ երկրորդ քարտուղար, առաջին քարտուղար, կոմկուսի Ստեփանակերտի քաղկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ, ԼՂ մարզկոմի կուսկազմակերպությունների բաժնի հրահանգիչ, ԼՂ մարզկոմի առաջին քարտուղարի օգնական:

1989-1993 թվականներին ղեկավարել է ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի կոմիտեն:

1990 թվականին ընտրվել է Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր:

1993-1995 թվականներին եղել է ՀՀ պաշտպանության նախարար:

1995-1996 թվականներին՝ ՀՀ պետական անվտանգության վարչության պետ, ապա՝ ազգային անվտանգության նախարար:

1996-1999 թվականներին՝ ՀՀ ներքին գործերի և ազգային անվտանգության նախարար:

1999 թվականին՝ ՀՀ ազգային անվտանգության նախարար:

1999-2000 թվականներին՝ ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար:

1999-2007 թվականներին՝ ՀՀ նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի քարտուղար:

2000-2007 թվականներին՝ ՀՀ պաշտպանության նախարար:

2007 թվականի ապրիլի 4-ին նշանակվել է Հայաստանի Հանրապետության վարչապետ:

2007 թվականի հունիսի 7-ին կրկին նշանակվել է ՀՀ վարչապետ՝ գլխավորելով ՀՀ Ազգային ժողովի ընտրություններից հետո ձևավորված կառավարությունը:

2008 թվականի փետրվարի 19-ին կայացած նախագահական ընտրություններում ընտրվել է Հայաստանի Հանրապետության նախագահ:
2008 թվականի ապրիլի 9-ին ստանձնել է ՀՀ նախագահի պաշտոնը:

2013 թվականի փետրվարի 18-ին կայացած նախագահական ընտրություններում վերընտրվել է Հայաստանի Հանրապետության նախագահ: 2013 թվականի ապրիլի 9-ին ստանձնել է ՀՀ նախագահի պաշտոնը և պաշտոնավարել մինչև 2018 թվականի ապրիլի 9-ը:

Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ է 2006 թվականից: 2006 թվականի հուլիսին ընտրվել և մինչև 2007 թվականի նոյեմբերը եղել է կուսակցության խորհրդի նախագահ:

2007 թվականի նոյեմբերին ընտրվել և հաջորդող համագումարներում վերընտրվել է ՀՀԿ նախագահ:

Երևանի պետական համալսարանի խորհրդի և Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահն է:

Ստացել է Արցախի հերոսի կոչում, ՀՀ «Մարտական խաչ» առաջին աստիճանի, «Տիգրան Մեծ» և ԼՂՀ «Ոսկե արծիվ» շքանշաններ, պետական այլ պարգևներ:

Ամուսնացել է 1983 թվականին: Կինը՝ Ռիտա Սարգսյանը, ծնվել է Ստեփանակերտում՝ զինվորականի ընտանիքում: Մասնագիտությամբ երաժշտության ուսուցչուհի է:

Ունի երկու դուստր՝ Անուշն ու Սաթենիկը, հինգ թոռնիկ՝ Մարիամը, Արան, Սերժը, Ռիտան և Տիգրանը: